* * *

Գիտեմ, ի՛մ ընկեր, շուտով պիտ իջնեմ
Մի մութ ու խոնաւ անծուկ գերեզման
Դառն կսկիծով ես պիտի թողնեմ
Զքնաղ քնութիւն անդարձ, յաւիտեան։

Էլ ես չեմ տեսնիլ սիրուն պուրակի
Դաշտեր հովիտներ ծածկող կանաչը,
Էլ ես չեմ լսիլ գարնան սոխակի
Ցխուր ու այրող երգի հառաչը։

Սոխա՛կ, որ երբեմն ինձ կեանք էր տալիս,
Վրդովուած հոգին երգով սփոփում,
Մերթ հրճուում էի, մերթ դառն լալիս
Եւ աղի արցունք առուի պէս թափում։

Բայց անցան շուտով որպէս մի վայրկեան
Երջանիկ կեանքիս ոսկեղէն ժամեր,
Անցան զնացին պատանեկութեան
Սիրոյ երազանք, քաղցրիկ անուրջներ...

Գալ աշունը քամին վայնասուն
Կկարդայ մեղմիկ իմ շիրմի վերայ
Տերեւթափ ծառի տխուր սօսափիւն
Դեղնած տերեւներ վրաս շաղ կտայ։

Իսկ դո՛ւ, իմ ընկեր, արքեցած կեանքի
Թաքուսիկ փառքի փայլ ու շուքերով
Ինձ էլ կմոռնաս առանց տանջանքի
Մեր անցած օրերն իւր երազներով։

Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆՑ